

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՊԱՀՈՑ

**Հանրային գրադարանը գաղափարների բաց
սեղան է, որի շուրջ հավաքված է ամեն ոք:**

(Գերցեն)

Հազարամյա ճանապարհ է անցել հայ գիրքը: Դեռևս իր առաջացման և զարգացման սկզբնական շրջանում հայ գիրն ու գրականությունը դարձան ժողովրդի ինքնագիտակցության և ինքնաճանաչման կարևորագույն գործոնը, փրկեցին ազգին ճգնաժամային վիճակից՝ ձուլման և ֆիզիկական ոչնչացման անխուսափելի վտանգից: Մեծ է մեսրոպատառ հայ գրի ու գրականության պատմական նշանակությունը մեր ժողովրդի համար: Նվիրական են հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի և Հակոբ Մեղապարտի անունները ամեն մի հայի համար: Նրանց կատարած մեծագույն աշխատանքի շնորհիվ է, որ հայ ժողովուրդը անցնելով դարերի դաժան փոթորիկների միջով՝ այսօր առաջավոր և կրթված մարդկության հետ հաղթականորեն քայլում է դեպի լուսավոր ապագան:

Հայաստանի ազգային գրադարանը տարիների ընթացքում հավաքում և պահպանում է աշխարհով մեկ սփռված գրականությունը՝ իր շտեմարանները (ֆոնդերը) համալրելով հայերեն և օտարալեզու մեծաքանակ հավաքածուներով: Այն հայ տպագիր արտադրանքի ամենախոշոր պահոցն է աշխարհում, ուր պահպանվում են հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք»-ը (Վենետիկ, 1512 թ.), առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարար»-ը (Մադրաս, 1794 թ.), առաջին տպագիր քարտեզները՝ «Համատարած աշխարհացոյց»-ը (Ամստերդամ, 1695 թ.) և «Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին եւ նոր աշխարհագրաց»-ը (Վենետիկ, 1751 թ.)...

Գլխավոր գրապահոցը Հայաստանի ազգային գրադարանի ամենամեծ ֆոնդապահ բաժինն է, որն իրականացնում է ֆոնդերի պահպանման և սպասարկման համալիր աշխատանքները: Գրապահոցում են պահպանվում գրքեր, լրագրեր, հանդեսներ, մանրաժապավեններ, սեղմագրեր ... ոչ միայն մայրենի, այլև աշխարհի շուրջ 70 լեզուներով: Բաժնի ֆոնդը միատարր չէ: Այն բազմաձյուղ է՝ ըստ բովանդակության, բազմատիպ է՝ ըստ հրատարակչական ձևերի, սահմանափակված չէ աշխարհագրական, լեզվական կամ ժամանակագրական որևէ շրջանով:

Գլխավոր գրապահոցի հավաքածուները ձևավորվել են տասնամյակների ընթացքում՝ անհատների, հաստատությունների, կազմակերպությունների, նվիրատվությունների, գնումների, անվճար պարտադիր օրինակների ձեռքբերման, ինչպես նաև Ազգային գրադարանի և այլ գրադարանների միջև գրքափոխանակության շնորհիվ:

Գլխավոր գրապահոցի հավաքածուն 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է շուրջ 6.038.984 միավոր, ինչը դեռ ստուգման և վերահաշվառման գործընթացում է:

Բաժինը ներառում է կառուցվածքային չորս ստորաբաժանումներ՝ հայերեն գրականության, ռուսերեն գրականության, օտարալեզու գրականության և մամուլի ենթաբաժիններ:

Հայերեն գրականության ենթաբաժնում պահպանվում է գիտության, մշակույթի և տեխնիկայի վերաբերյալ հայերեն գրականությունը: Ֆոնդն ամբողջությամբ վերահաշվառվել և մուտքագրվել է Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ՝ «ԿՈՀԱ» ծրագրով և կազմում է

327.870 միավոր: Ռուսերեն և օտարալեզու գրքերի մուտքագրման և հաշվառման աշխատանքներն ընթացքի մեջ են: 2013 թվականից գրադարանում գրքերը մշակվում են ըստ I, II, III, IV չափսանիշի (ֆորմատ) և գրադարակների վրա դասավորվում են խիստ հաջորդականությամբ:

Մեծ է հայ պարբերական մամուլի դերը մեր կյանքում: Հայ մամուլը 225 տարվա պատմություն ունի, որն արտացոլել է հայ ժողովրդի պատմական ուղին, հասարակական մտքի զարգացումը: Այն մեր ժողովրդի մտավոր և հասարակական կյանքի բոլոր փուլերն ու հրապարակախոսության անցած ուղիներն արտացոլող նյութերի բազմահարուստ շտեմարանն է:

Ազգային գրադարանն ունի հայերեն, ռուսերեն և օտարալեզու պարբերական հրատարակությունների հարուստ հավաքածուներ, որոնց մեծ մասը գտնվում է Գլխավոր գրապահոցում:

Ամբողջությամբ ավարտվել են հայերեն հավաքածուների վերահաշվառման աշխատանքները: 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ այն կազմում է 608.647 միավոր:

2018 թ. բաժնի հավաքածուները համալրվել են 45.256 միավոր գրականությամբ: 2018 թ. բաժին մուտք են գործել շուրջ 72.000 պատվիրաթերթիկներ, որոնց 99.8 տոկոսը բավարարվել է: Պատվիրաթերթիկների սպասարկումը կատարվում է մեկ ժամվա ընթացքում:

Գրադարանի հարուստ և բազմաբովանդակ գրական-մշակութային ժառանգությունը բացահայտվում է նաև ցուցահանդեսների միջոցով: Ցուցադրվող գրականության մեծ մասը տրամադրում է Գլխավոր գրապահոցը:

Գիրքն է այն բոլոր իմացությունների բանալին, որ մարդկանց տալիս է հարցերի սպառիչ պատասխաններ: Այն զարգացնում, կրթում, միտք է ճկում և, ի վերջո, մարդուն «Մարդ» դարձնում:

Դերենիկ Դեմիրճյան